ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
12 ապրիլի 2013թ. N 25

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքի ավագանու օրակարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության „Տեղական ինքնակառավարման մասին օրենքի" 12-րդ հոդվածի պահանջներով

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը

1. Համայնքի 2013թ. բյուջեի 1-ին եռամսյակի կատարման մասին հաղորդում
2. Իջևան քաղաքային համայնքի 2013թ բյուջեում փոփոխություններ և ծախսերի նախահաշվում հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին
3. „Բելոռուս" ԷՕ 2621 մակնիշի էքսկավատորը քաղաքապետարանի ենթակայության „Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն" բյուջետային հիմնարկին հատկացնելու մասին
4. „Քաունթերփարթ" ինտերնեյշնլ հայաստանյան կազմակերպության և Իջևանի քաղաքապետարանի համատեղ ծրագրի աշխատանքների մասին
5. Իջևանի թիվ 1 մանկապարտեզում նոր խումբ բացելու և հաստիքացուցակում փոփոխություններ կատարելու մասին
6. Քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում նոր անդամներ ընգրկելու մասին
7. Իջևանի միջնակարգ երաժշտական դպրոցի մի քանի սովորողների ուսուցումը անվճար հիմունքներով իրականացնելու մասին
8. Քաղաքաշինական և այլ նպատակներով հողամասեր հատկացնելու, ինքնակամ շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու մասին
9. Այլ հարցեր

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՕՄԻՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

1.ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Իջևան համայնքի 2013թ. տարեկան բյուջեն եկամուտների մասով ապրիլի 1-ի դրությամբ կատարվել է 26,3%, այդ թվում սեփական եկամուտները կատարվել են 29,7% /նախատեսված 66850,0 հազար դիմաց փաստացին կազմել է 19882,3 հազար դրամ/:

Հարկային եկամուտները կազմվել են 37,7% /նախատեսված 33600.0 հազար դրամ դիմաց փաստացին կազմել է 12663.7 հազար դրամ/, այդ թվում գույքահարկը կատարվել է 37,6%, հողի հարկը 38,4%:

Ընդամենը տուրքերը կատարվել են 21,5%, այդ թվում պետական տուրքերը 26,8%, տեղական տուրքերը՝ 18,3%:

Համայնքի գույքի օտարման առաջադրանքը կատարվել է 11,6%:

Ընդամենը ծախսումներ կատարվել են 22,9% /նախատեսված 350294,0 հազար դիմաց փաստացին կազմել է 80471,3 հազար դրամ/:

Քաղաքապետարանի պահպանման ծախսերը կատարվել են 20,8%, կրթության ծախսերը՝ 23,7%, մշակույթը և սպորտ՝ 22,3%, սան. մաքրման և կոմունալ ծախսերը՝ 24,9%:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի

ՈՐՈՇՈՒՄ

12 ապրիլի 2013թ. N 26-Ն

2.ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության 07.02.2013թ թիվ 130-Ն որոշմամբ Իջևան համայնքի մշակույթի տան ,,Շողեր'' մանկական թատրոնի համար մշակութային գույքի ձեռք բերման նպատակով Իջևան համայնքին նախատեսվել է հատկացնել 2մլն դրամ կապիտալ սուբվենցիա:

ՀՀ կառավարության 07.02.2013թ թիվ 94-Ն որոշմամբ Իջևանի քաղաքապետարանի ՔԿԱԳ բաժնի պահպանման համար հատկացվել է 3521.3 հազար դրամ:

Ելնելով նախորդ տարվա գույքահարկի հաշվարկային և փաստացի կատարման ցուցանիշներից 2013թ գույքահարկի տարեկան առաջադրանքը անհրաժեշտ է ավելացնել 5000.0 հազար դրամ:

Բացի այդ անհրաժեշտություն է առաջացել ֆոնդային բյուջեում կատարել 9000,0 հազար դրամ հոդվածային վերաբաշխումներ:

Ղեկավարվելով ՀՀ «ՏԻՄ» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն քաղաքապետի առաջարկությանը.

1.Վարչական բյուջեն ավելացնել 5171,3 հազար դրամ, այդ թվում 5000,0 դրամ գույքահարկի 7.2 բաժնի 900375121036 հաշվին, 171,3 հազար դրամ 47.1 բաժնի 900375121184 հաշվին, որպես ՔԿԱԳ պահպանման համար նախկինում և վերոնշյալ որոշումով հաստատված գումարի տարբերություն:

Վարչական բյուջեի ավելացված 5171,3 հազար դրամից 890,0 հազար դրամ հատկացնել 09.01.01.51 բաժնի թիվ 1 մանկապարտեզի պահպանման ծախսերի 4511 հոդվածին, 360 հազար դրամ հատկացնել 08.02.04.51 բաժնի մասսայական միջոցառումների 4239 հոդվածին , 500,0 հազար դրամ 4727 հոդվածին, 940,0 հազար դրամ 01.06.01. բաժնի 4241 հոդվածին, 60,0 հազար դրամ 4823 հոդվածին, 700,0 հազար դրամ 01.01.01 բաժնի 4262 հոդվածին, 4823 հոդվածին 650,0 հազար դրամ, հուղարկավորությունների համար 10.3.1 խմբի 4729 հոդվածին 600.0 հազար դրամ, 10.7.1. խմբի 4729 հոդվածին 300.0 դրամ, 101,3 հազար դրամ ՔԿԱԳ պահպանման ծախսերի 1.6.1 բաժնի 4269 հոդվածին 70,0 հազար դրամ,:

2. Ֆոնդային բյուջեն ավելացնել 2000,0 հազար դրամ և հատկացնել 08.02.03 բաժնի 5129 հոդվածին, 04.05.01 բաժնի 5113 հոդվածից կրճատել 9000,0 հազար դրամ, որից 2000,0 հազար դրամը հատկացնել 06.06.1 բաժնի 5129 հոդվածին 1000,0 հազար դրամ հատկացնել 04.05.01 բաժնի 5134 հոդվածին, 2000.0 հազար դրամ հատկացնել 5129 հոդվածին, 4000,0 հազար դրամ 5112 հոդվածին:

3. Հաստատել Իջևան համայնքի 2013թ ճշգրտված բյուջեն՝ եկամուտների մասով 356655,3 հազար դրամ, ծախսերի մասով 357465,3 հազար դրամ վարչական բյուջեի, 6282,1 հազար դրամ ֆոնդային բյուջեի, ընդամենը 363747,4 հազար դրամ: Բյուջեի դեֆիցիտը կազմում է 7092,1 հազար դրամ, որից ծածկմանն ուղղվում է 7092,1 հազար դրամ տարեսկզբի ազատ մնացորդը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՕՊԻՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
12 ապրիլի 2013թ. N 27

3. „ԲԵԼՈՌՈՒՍ" ԷՕ 2621 ՄԱԿՆԻՇԻ ԷՔՍԿԱՎԱՏՈՐԸ „ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ" ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ քաղաքի սանիտարական և աղբահեռացման աշխատանքների բարելավման նպատակով անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերված „Բելոռուս" ԷՕ 2621 մակնիշի էքսկավատորը հատկացնել „Իջևան քաղաքի կոմունալ ծառայություն" բյուջետային հիմնարկին: Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով.

Իջևան համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը՝ ձեռք բերված „Բելոռուս" ԷՕ 2621 մակնիշի էքսկավատորը օրենքով սահմանված կարգով ձևակերպել և հատկացնել համայնքի տարածքի սանիտարական մաքրման, աղբահեռացման և բարեկարգման աշխատանքներն իրականացնող „Իջևան քաղաքի կոմունալ ծառայություն" բյուջետային հիմնարկին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՕՊԻՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
12 ապրիլի 2013թ. N 28

4.„ՔԱՈՒՆԹԵՐՓԱՐԹ" ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ „Քաունթերփարթ" ինտերնեյշնլ հայաստանյան կազմակերպության կողմից առաջարկություն է արվել իրականացնել Իջևան քաղաքի Ա.Մելիքբեկյան փողոցում գտնվող գունաերաժշտական շատրվանների և շրջակա տարածքի հիմնանորոգման ծրագիրը:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 14 մլն դրամ, որից՝ համայնքի ներդրումը 4 մլն:

Իջևան համայնքի ավագանին որոշում է՝

1. Ա.Մելիքբեկյան փողոցում գտնվող գունաերաժշտական շատրվանների և շրջակա տարածքի հիմնանորոգման համար համայնքի 2013թ բյուջեից հատկացնել 4 մլն դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
12 ապրիլի 2013թ. N 29

5.ԻՋԵՎԱՆԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ ՆՈՐ ԽՈՒՄԲ ԲԱՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ ավելացել է թիվ 1 մանկապարտեզ հաճախող երեխաների թվաքանակը, ուստի անհրաժեշտություն է առաջացել բացել նոր խումբ՝ և հաստիքացուցակում ավելացնել դաստիարակի և դայակի մեկական հաստիքներ:

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով և 32-րդ հոդվածի 5-րդ կետով.

Իջևան համայնքի ավագանին որոշում է՝

1. Թիվ 1 մանկապարտեզում բացել նոր խումբ:
2. Թիվ 1 մանկապարտեզի հաստիքացուցակում ավելացնել դաստիարակի և դայակի մեկական հաստիքներ՝ համապատասխան դրույքաչափերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՕՄԻՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
12 ապրիլի 2013թ. N 30

6.ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ՆՈՐ ԱՆԴԱՄՆԵՐ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

,Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 24-ի 164-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 3-րդ կետի:

Իջևան համայնքի ավագանին որոշում է՝

որոշում է՝

Քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում ընդգրկել քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Լիլիթ Ղալումյանին և 1-ին կարգի մասնագետ Լիլիթ Սարիբեկյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
12 ապրիլի 2013թ. N31

7.ԻՋԵՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԻ ՔԱՆԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԱՆՎՃԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ «Իջևանի միջնակարգ երաժշտական դպրոց» ՓԲԸ-ի տնօրենությունը դիմել է քաղաքապետարան՝ առաջարկելով Իջևան համայնքում ապաստանած սիրիահայերի երեխաներ՝ դպրոցի 1-ին դասարանում սովորող Նանե և Նվարդ Այնթաբյանների, և համայնքի բնակիչ, նույն դպրոցի 8-րդ դասարանում միակ սովորող Հայարփի Մխիթարյանի ուսուցումն իրականացնել անվճար հիմունքներով: Նկատի ունենալով, որ դաշնամուրային դասարանում սովորող Հայարփի Մխիթարյանը ուսումնառության տարիներին մշտապես ունեցել է բարձր առաջադիմություն, մասնակցել է բազմաթիվ փառատոների և արժանացել մի շարք մրցանակների.

Իջևան համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն քաղաքապետի առաջարկությանը՝ Իջևանի միջնակարգ երաժշտական դպրոցի 1-ին դասարանում սովորող սիրիահայեր Նանե և Նվարդ Այնթաբյանների, և նույն դպրոցի 8-րդ դասարանում միակ սովորող Հայարփի Մխիթարյանի ուսուցումն իրականացնել անվճար հիմունքներով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի

ՈՐՈՇՈՒՄ

12 ապրիլի 2013թ. N 32

8.ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ առաջարկություն են ներկայացվել Իջևան քաղաքի մի խումբ բնակիչների կողմից ինքնակամ կառուցված, ինչպես նաև ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու համար: Առաջարկություններ են ներկայացվել նաև քաղաքաշինական և այլ նպատակներով աճուրդային, մրցութային, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով առանց մրցույթի կառուցապատման իրավունքով հողամասեր հատկացնելու մասին:

Իջևան համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն ինքնակամ կառուցված շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու, քաղաքաշինական և այլ նպատակներով՝ աճուրդային, մրցութային և ողղակի կարգով կառուցապատման իրավունքով հողամասեր հատկացնելու մասին առաջարկությանը համաձայն աղյուսակի

ՀՀ	Նպատակը	Հասցե	Մակերեսը/քմ
1.	Բազմաբնակարան կառուցապատում /ինքնակամ բաց պատշգամբ/	Նալբանդյան փ. 6/9	7.2
2.	Բազմաբնակարան կառուցապատում /ինքնակամ բնակարան/	Նալբանդյան փ. 6/9	45.15
3.	Բնակելի կառուցապատում	Այգեստան փ.	104,1
4.	Բնակելի կառուցապատում/ինքնակամ բնակելի տուն/	Այգեստան փ.	504,1/33,5
5.	Ոչ բնակ տարածք /ինքնակամ նկուղ/	Անկախության փ թիվ 4/46	36,34 ներքին մակերես
6.	Ոչ բնակ տարածք /ինքնակամ նկուղ/	Աբովյան փ թիվ 10/40	75,2 ներքին մակերես
7.	Հասարակական կառուցապատում	Երիտասարդական փ.	2x18.0
8.	Հասարակական կառուցապատում	Երիտասարդական փ.	19.8

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՄԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆ

ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ